

Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Մի 13



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ





ՀԱՅԿԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՅԿԱՅԻՆ



ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԳԻՏՈՒԹՅԱՆ



ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ


ՀԱՆՐԱԳԻՏ هائراکيداق HANRAKIDAGUE

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 13 || 29 ՄԱՐՏ 1903

ԳԱՐՈՒՆԸ

ՊՋՏԻԿՆԵՐՈՒՆ



Երբ գայ գարուն
Զարթնու բնութիւն.
Թռչնակն երգիչ
Արագածուիչ
Երգելով միշտ
Փարատէ վիշտ:

Զեփիւռ զովիկ
Գեղակայտուիկ,
Իւր թեւ թաշեայ
Պարզած փութայ,
Ծաւալելով
Խունկ, բոյր եւ զով:

Հոյլ հոյլ ծաղկունք
Գոհար ակունք,
Եւ սիրուն վարդ
Գեղազուարթ,
Ի՛նչ գեղանի
Բոյրով ծըլի:

Վտակ սիրուն,
Ի՛նչ պարարուն,
Դարիւ դարիւ
Սահի՛ ծայնիւ,
Ալախօսիկ
Սոխակ քնքշիկ:

Գովէ գարունն
Երգով սիրուն.
Գորգ բընու թեան
Հրրաշագան,
Պատմէ անգին
ՓԱՌՔՆ Արարչին:

Կ. Գ. ԳՕՃԱԵԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՁԱՐԱՆԻ ՄԷՋ

37. Շոյոֆորք մը եւ usafous մը

Գիտէ՞ք ինչ է շոյոֆորթութիւնը, բայց թերեւս չէք նշմարած թէ չահաւէտ սուտ մ'է, որովհետեւ շոյոֆորթը կը փափաքի միշտ բան մը շահիլ կամ քաշել անորմէ որ կը շոյոֆորթէ: Նոյնպէս կեղծաւորութիւն մ'է, որովհետեւ գրեթէ միշտ շոյոֆորթը չըսեր խորհածը: Ահա այս է, որ շոյոֆորթին այնչափ ցած նկարագիր մը կու տայ, եւ զայն այսպէս տգեղ գործ մը կը դարձնէ, եւ զայն այնչափ արհամարհելի կ'ընէ: Յիշեցէք Լաֆոնդէնի առակը Ագուար եւ Աղուէսը: Տեսէք Աղուէսը ինչ միջոց ի գործ կը դնէ իր նպատակին հասնելու համար: Սուտը կեղծաւորութեան կը միացնէ եւ այնպէս կ'ընէ Լեգուարին ձեռքէն պանիրը առնելու համար:

Ո՛չ ոք շոյոֆորթենք: Երբէք ստիպուած չենք մէկուն հաճոյախօսութիւն ընել, մանաւանդ երբ այդ մասին չենք խորհիր: Եթէ մէկուն համար շատ լաւ բաներ չենք խորհիր, բնաւ իրեն այնպէս չըսենք, խօսակցինք, բայց չշոյոֆորթենք, մանաւանդ անկէ բան մը ստանալու համար: Որչափ որ մեկը շոյոֆորթութեամբ բարձրացնենք, այնչափ զմեզ կ'ստոնացնենք:

38. Հաւատարիմ եղիր

Պզտիկ աղջիկ, վարժուէ հաւատարիմ՝ ըլլալ խոստումներուդ, հաւատարիմ յանձնառութիւններուդ, հաւատարիմ պարտականութիւններուդ հաւատարիմ զգացումներուդ:

Կիները շատ կը մեղադրեն փոփոխութիւն սիրելնուն համար, մէկդի կը թողուն ամէն բան, որ առաջ հաճելի էր իրենց, ուրիշ մը գտնելու համար: Կ'ըսեն, թէ անոնք թեթեւ են եւ փոփոխամիտ: Աշխատէ, որ բնաւ այս մեղադրանքը քեզ չընեն:

Լուրջ չես ըլլար քանի որ մտքէդ, սրտիդ մէջ փոփոխութեան ճաշակ կայ: Երէկ առարկայ մը քեզ գեղեցիկ եւ հաճելի թուեցաւ, այսօր զանոնք կը մերժես, բայց երբէք փոխուած չէ: Դուն ես փոխուած, քու ճաշակդ է փոխուած: Այս մի ընե՛ր՝ սիրած բաներուդ հաստատուն կերպով կապուէ եւ անոնց, զոր պարտականութիւն եւ ուրախութիւն ունիս սիրելու: Հաւատարիմ

եղիւ ծնողիդ, հաւատարիմ բարեկամներուդ, հաւատարիմ խօսքիդ, կը վստահացնեմ քեզ որ սիրտդ տաւ հանգիստ պիտի ըլլար եւ ամեն մարդ քեզ պիտի յարգէ:

39. Ամեն գիշեր ինքզինքն հարցաւնենել

Ելիզան լաւ սովորութիւն մ'ունի: Ամէն երեկոյ քնանալէ առաջ, ինքնիրեն կ'ըսէ: «Այսօր ինչ գէշ բան ըրի:» եւ օր չանցնիր, աւա՛ղ. որ պակասութիւն մը գործած չըլլայ: Որովհետեւ Ելիզան կատարեալ մէկը չէ, քեզի պէս է փոքրիկ աղջիկ, շատ պակասութիւններ ունի, բայց կ'ուզէ լաւ ըլլալ եւ պիտի ըլլայ անշուշտ ամէն երեկոյ այսպէս հարցութիւններով ինքզինքը:

Այո՛, նմանէ Ելիզային: Երբ սենեկին մէջ ամէն բան հանդարտ է եւ լուռ եւ բան մը չխանգարեր քեզ, քու հոգոյդ խորը մտիւր: Հարցուր քեզի, Ելիզին պէս, թէ չար բան մ'ըրի՞ր: Պիտի տեսնես որ ծաւլութիւն ըրիր, խենթութիւններ, շատախօսութիւն, թերեւս ստախօսութիւն, թերեւս անհնազանդութիւն, թերեւս յամառութիւն: Դու պիտի վճռես վաղն այնպէս չըլլայ և պիտի քնանաս յառաջագոյնով քաջասրտութիւն ունենալ առաւել լաւ ըլլալու: Մարդ ի՞նչ պակասութիւններն այն ատեն լաւ կը ճանչնայ երբ ինքզինքն հարցութիւններ: Բարոյն ճանապարհին մէջ կը կատարելագործուին ամէն օր լաւ որոշումներ տալով:

40. Եթէ գործաւոր կամ պատշտօնեայ ըլլամ

Եթէ գործաւոր ըլլամ, գիտեմ թէ ինչ պարտիմ ընել գործս կատարեալ ընելու համար:

Երբ գործատան մը կամ գրասենեակի մը մէջ աշխատիմ, որոշեալ ժամին պիտի երթամ, եւ աշխատութեան ժամերուն մէջ ժամանակս պիտի չկորսնցնեմ: Պիտի յիշեմ, որ իմ եւ տիրոջս մէջ պայման մը կայ հաստատուած. թէպէտ եւ ատոր վրայ խօսած չը լինինք: Բանի որ որոշեալ գումար մը կը վճարէ ինձ որոշեալ ժամերու աշխատութեան համար: Եթէ կորսնցնեմ ժամանակս, հինգ րոպէ հոն, այս գողութիւն մ'է, որ կ'ընեմ ի վնաս անոր, քանի որ ստացած գումարս միշտ միեւնոյնն է:

Բարի օրինակ պիտի տամ ամենուն. օրինակ խոհականութեան, քաղաքավարութեան, գործունէութեան. և այն մարդերուն, որք իմ քովս պիտի լինին:

Եթէ որ եւ է նկատողութիւններ ունիմ յայտնելու, զանոնք կը ներկայացնեմ քաղաքավարի եւ վայելուչ կերպով իմ վրայ հրահելու պաշտօն ունեցող անձին: Եթէ ստիպուած լինիմ՝ պաշտօնս թողուլ՝ պիտի չաշխատիմ ուրիշ գործաւորներու եւ պաշտօնեայներու ալ հեռանալուն պատճառ դառնալ, որոնց ապրուստի միջոցը միայն իրենց օրավարձն է: Լաւ գործաւոր մը պիտի լինիմ:

Տիկին Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ



(ԱՒԱՆՆԻԱՎԷՊ)

« Ի՛նչ որ ընես՝ քեզի՛ կ'ընես, մամա՛, մամա՛, պատառ մը հաց »: — Ա՛յս էր խեղճուկ ժուռեկի (1) մը բանաձեւուած յանկերգը, կից՝ անոր աղեկեզիկ աղաչանքներուն: « Ի՛նչ որ կ'ընես՝ քեզի կ'ըլլայ, քուր՝ակ, քուրուկ, քչիկ մը հաց »: միշտ այս առածին արտաբերումը, արցունքոտ աղերսներով աճառուած: Պատերուն տկտիքը, պատուհաններուն քովն ի վեր եւ աղբիւրներուն գլուխը, ո՛ւր որ ուրախալից հաւաքում մը գումարուած ըլլար, լուր օրերու կանացի խումբերէն սկսելով՝ գուլպայի մը գործը կամ րօքին դարձգարծիկ թելը ձեռուընին՝ մինչեւ կիրակնօրեայ կեանքոտ կայթատօնները, միեւնոյն առիթներն էին անսուտղ մուրիկին համար, որ ամէն տեղ կ'երեւէր, ամէնուն կը պաղատէր, փերթ փերթ կտրտած, փորփոտած հագուստներուն տակ սրսփալով ու չարքաշ մարմնոյն կմախքը հազիւ հազ քաշքշելով հոս ու հոն: Ի՞նչ ըներ, երբ գտնուէին մարդիկ, որոնք իրենց ճոխ սեղանէն կտոր մը հաց չի տալէ վատ՝ կոշտ խօսքերով իր սիրտը կը խոշտանգէին. ուրիշներ՝ տուածնին թուք ու մուրով կը պղծէին. կային վերջապէս բարեգործ հոգիներ ալ, գտնուած քիչէն բաժին հանող եւ մխիթարանքի կազդուրիչ խօսքերով՝ անբաղդին սիրտը հովահրող: « Կեանքի այս անբաղդ կոշնականը տառապալից ճամբայ մ'ունէր, ուրկէ պիտի քալէր, կամայ՝ ակամայ, ձեռքը երկարած բարիներուն, զորս կը փնտռէր եւ որոնց կ'աղերսէր, կը թախանձէր, ռամկական իմաստասիրութեան այդ ճշմարիտ եղրակացութիւնը՝ չրթունքին: — « Ի՛նչ որ ընես՝ քեզի կ'ընես »:

* * *

Բարիներու փոքրաթիւ դասակարգին մէջ, տարեց կին մը կը գտնուէր, կոկիկ տան մը բարեկեցիկ կեանքովը միայնակ ապրող, ասիկա ամէն օր, կանոնաւորապէս, ամբողջ նկանակ մը՝ և շատ հեղ ալ մաս մը կերակուր միասին՝ կուտար աղքատին, որ իր ուրոշեալ ժամուն անոր դուռը կը զարնէր, սրտառուէ բանաձեւը կրկնելով, եւ գոհ ու շնորհակալ՝ կը մեկնէր, բիւր բարեմաղթութիւններ նուիրելով բարի կնոջ ամուսնոյն ու զաւկին կենաց համար:

Տարիները կը գլորէին, բայց ո՛չ աղքատը կը մոռնար՝ ո՛ր մը

(1) Մուրացկան:

խոհ՝ իր ամենօրեայ փոքրիկ նպաստը եւ ո՛չ ալ կինը կրնար վերջ տալ այդ սովորոյթին :

Օրին մէկը, սակայն, զգաց թէ ա՛լ ձանձրալի կը դառնար ասիկա, եւ ո՛վ գիտէ, կեանքի մէջ յաճախադէպ ո՛ր մէկ սրտնեղութենէն դրդուելով վերջնապէս արտաքսեց հնամենի մուրացիկը: Բայց ան՝ այսպիսի բաներու շատո՛նց վարժուած՝ փոխանակ վերջ տալու իր անախորժ այցերուն, ա՛լ աւելի կրկնապատկեց թախանձանքները, ամենէն սրտաշարժ բառերը կցելով ողբագին հեծեծանքներու, զորս կը փակէր անմուաց առածովը, — Ի՛նչ որ ընես՝ քեզի կ'ընես. մամա՛, մամա՛, բրդուճ մը հա՛ց :

Կինը, վերջապէս զգուած այս յարաճուն սիրտ-հատնումներէն, կը խորհի ծայրայեղ միջոցով մը օձիքը թոթուել: Ու սե խորհուրդ մը կը յղանայ, զոր կը գործադրէ ալ աներկբայ :

Յաջորդ օրը, մուրացկանը դարձեալ դրան կը բալխէ, աղեկըտուր աղաչանքներու կծիկը քակելով եւ սովորական յանկերգը՝ բերնին. — « Ի՛նչ որ ընես՝ քեզի՛ կ'ընես. մարի՛կ, մարի՛կ, իս մի մոռնար... » :

Այս անգամ, քանի մը վայրկեանի սուտ-տրտունջներէ յետոյ, կինը դուրս կ'ելլէ եւ առաջուց պատրաստուած կարկանդակ մը կուտայ ժուռեկին, որ հաղար օրհնէնքներով կը հեռանայ :

Կարկանդակը՝ գէշ պատրաստուած էր սակայն :

* * *

Բնակութիւններէն շա՛տ անդին, հոն ուր չեն հասնիր կեանքի ժխորին արձագանքները, բնութեան լայն գրկին մէջ, ժուռեկները կ'երթան, իրիկուան, իրենց ճաշն ընել՝ առուի մ'եզերքը կամ ժայռի մը կոշոր: Մինչեւ իրիկուն սեղմուած, տառապած իրենց սրտիկը՝ կը բացուի, կը հովահրի. հո՛ն՝ խնայողներ, զըրկողներ շկան, շուրջերնին սփռուող անսահման տարածութիւնը ակնադրաւ հեռապատկերներու հմայքը կը ներշնչէ իրենց ու թըռչուններն ալ, իրենց ամենէն հոգեզմայլ դայլայլիկները կը շըռայլեն: Այդ պահուն, երբ ամբողջ օրուան աղի-արցունքին տաժանագին արդիւնքը պիտի վայելեն, ըլլայ կտորիկ մը հաց նոյն խոհ, կ'զգան իրենք թէ՛ գէթ քանի մը ժամուան ինքնամոռացումով օրուան յոգնութենէն ու վաղուանին մոմտութենէն կարելի՛ է խաղաղիլ, բնութեան գիրկն ապաստանելով :

Մեր ծանօթ մուրացիկն ալ այդ ճամբան բռնած էր, մախաղը գաւազանին ծայրը՝ կունակին ետեւ կախուած: Այդ օրուան ձեռք բերածներէն՝ կարկանդակը միայն մնացած էր. իբրեւ իրիկուան ճաշ, իր սովորական տեղը հասաւ, ու գոհունակ դէմքով մը՝ կարկանդակը դուրս հանած՝ ճաշն սկսելու վրայ էր. երբ դիմացէն

բրթող ահագին աղմուկէ մը ցնցուեցաւ յանկարծ: Ի՞նչ կար: Առաջին ակնարկով փոշիի ամպ մը տեսաւ մինակ, որ դէպի իր նըստած տեղը կը քշուէր, լայննալով ու տարածուելով: Վայրկեանէ մը, սակայն, որոշակի տեսնուեցան զոյգ մը կտրիճ ձիաւորներ, որոնք քառամբակ կ'արշաւէին:

Խեղճ ժուռեկը, վախէն շուարած, փութով տոպրակին մէջ պահեր էր կարկանդակը, եւ հիմա. եկողները տեսնելուն պէս, ոտքի կը ցատկէր՝ ըլլալիքը հասկնալու համար: Զիաւորները վար իջան իրենց զարդարուն ձիերէն: Կ'երեւէր թէ՛ երկու հարուստ կըտրիճներ էին, մին տարէց եւ միւսը դեռատի երիտասարդ մը: Բայց ինչո՞ւ յուսարեկ, նուազկիտ դէմք մ'ունէին: Անոնք անմիջապէս յայտնեցին թէ՛ հեռու քաղաքէ մը կուգան, թէ՛ ուտելիք պաշարին սպառած է եւ բաւական ատենէ ի վեր անօթի կը տառապին, եւ խնդրեցին մուրիկէն իրենց տալ ունեցած ուտեստը, ինչ ալ ըլլայ, ռսկիով փոխարինելու պայմանով:

Բարեմիտ աղքատը, աւելի սրտին թելադրութենէն զգածուած՝ քան ռսկիի հրապոյրէն, վեր առաւ տոպրակն առանց վարանումի եւ ճամբորդներուն յանձնեց առտուան կարկանդակը. որմէ դեռ պատառ մ'իսկ չէր վայելած:

Ուտելէ աւելի՝ լափեցին գայն անգիտա՛կ ճամբորդները: Եւ այնքան ատենէ ի վեր զիրենք չարչարող անսուաղութենէն պրծած՝ զուարթօրէն ցատկեցին ձիերնուն վրայ, փութալով դէպ ի դիմացի գիւղը, ուր տարիներէ ի վեր մէկուն ամուսինը եւ միւսին մայրիկը իրենց կ'սպասէր:

* * *

Խանդակաթ՝ գրկընդիսառնումներն, անցեալի կարօտագին սպասումներէն յետոյ՝ ապագայի փողփողուն յոյսերու ընդելուզումած, վայրկեան մը դրախտի փոխակերպեցին մենակեաց մայրիկին բնակարանը, ու մայրիկը՝ գաւկին եւ ամուսնին կրկնակ ողջագուրանքներուն պատասխանելու համար՝ համակ եռանդ, սէր, ժպիտ ու բերկրանք դարձած էր: Սովորական տեսակցութիւն մը չէր ասի, այլ ուրախութեան պոռթկում մը՝ յորդառատ:

Բայց բնական օրէնքները բացառութիւն չեն ընդունիր. — Ահռելի խիթերը, որոնք իրենց սկզբնաւորութեան մէջ՝ հրճուանքի յորդումէն՝ անզգալի կը թուէին հիմա, կը սկսին գալարիլ, քայքայել անոնց ընդերքը, անճողոպրելի հոգեւարքի մը ամեհի ախտանիշերը երեւան բերելով:

Սուգին սեւը կը մսալուի՝ խրախճանքներով ողողուած այդ տան ներսիդին. համբոյրները կը սառնին՝ սարսուռներէն պրկուած չըր-

թունքներու վրայ եւ կեանքոտ քահքահները՝ սրտամորմոք հեծ-
կըլտուքներու կը յանգին :

Ու մեռնող նորեկները, հազիւ կրցան երկու բառ իրարու կը-
ցել, պատասխանելու համար իրենց ուղղուած կենսապառ հար-
ցումներուն, կցկտուր, խեղդուկ պատասխաններ միայն, որոնք
սակայն այն օրուան աղքատին ու անկէ առնուած կարկանդակին
պատմութիւնը ուրուագծելով, մագերը փետտող կնոջ մտքին մէջ,
անակնկալ աղէտքին իսկական շարժառիթը կը լուսաբանեն :

* * *

Դո՛ւք, պճըլիկ ընթերցողներս՝ դո՛ւք որ կեանքի արշալոյսին
յուսալից շողարձակումն ունիք ձեր թրթռուն թարթիչներուն
տակ, ու դպրոցական դրասեղաններուն վրայէն կը պատրաստը-
ուիք մտնել ա՛յն աշխարհը՝ որ ձեզի դեռ անծանօթ է, գիտցէ՛ք,
հաստատապէս համոզուեցէ՛ք թէ՛ կեանքի բոլոր բաւիղներուն մէջ
ամենէն ապահով ճամբան միայն բարութիւնը, յարատեւ բա-
րութիւնը կրնայ ցոյց տալ ձեզի: Յիշեցէ՛ք խեղճ աղքատին խօս-
քը, որ ժողովուրդին բերնէն անպակաս է. « Ի՛նչ որ ընես՝ քեզի
կ'ընես »: Մարդկային փորձառական իմաստասիրութեան վերջ-
նական վճի՛ռն է աս, իմաստով՝ յարեւմտեան ուրիշ մեծ եզրակա-
ցութեան մը, որուն վրայ հիմնուած են Տիեզերքի բոլոր Օրէնք-
ներն ու Կրօնքները. — Ի՛նչ որ չես ուզեր ուրիշը քեզի ընէ՝ դու
ալ մի՛ ընես անոր :

Տիարպէքիր

ՀԵՒՈՆ ՍՐԱՊԵԱՆ

ՄԱՅՐԵՐՈՒ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Սբերճրն կ'ըսէ. « Բարի մայր մը հարիւր դաստիարակ կ'ար-
ժէ: Դաստիարակին սրէնքը կ'ստիպէ, բայց մօրը օրէնքը կը մղէ:
Դաստիարակը կը յղկէ, բայց ձեւակերպողը մայրն է: Մարդ եր-
բէք չի մոռնար ինչ որ սորված է մօրը ծունկերուն առջեւ »:

Եւրոպական նշանաւոր գիտուն մը կ'ըսէ. « Ամբողջ Եւրոպիոյ
համալսարաններն չեն կրնար ջնջել աղու մը մտքէն այն տպաւո-
րութիւնները, զոր տան մէջ մօրը ծունգերուն վրայ առած է »:

Ծօն Նիւթըն կը պնդէ թէ իր մօր մահուանէն երկար տարի-
ներ վերջը սխալ ընթացքէն ետ դարձաւ իբր թէ մօրը ձայնը կը
հասնէր իրեն լուսոյ երկրէն « առաքինութեան դարձիր »:

Աբրահամ Լինքըն. « Ինչ որ եմ կամ կը յուսամ ըլլալ՝ մօրս
կը պարտիմ »:

Հէնրի Պիչըր . « Մօր մը սիրտը ուսումնասրահն է զաւկին » :
 Ծօն Թէնտոլֆ՝ Վիրճինիոյ նշանաւոր օրէնագէտը՝ անգամ մը
 ըսաւ . « Անաստուած մը պիտի ըլլայի եթէ մօրս Աստուածապաշտ
 յիշատակութեան զօրութիւնը չըլլար իմ մտքիս մէջ » :


Ծօն Ռըսքին , վսեմադոյն մարդը սապէս գրեց . « Իմ նկարա-
 գիրս կազմելու մէջ մօրս ազդեցութիւնը թանկագին է » :

Անգամ մը հարցուցին Նաբոլէոնի թէ Գաղղիոյ ազգին կարե-
 ւոր պէտքը ի՞նչ է . Նաբոլէոն Պօնաբարդ խորխտ շեշտով մը ո-
 ղոտաց . « Մայրե՛ր » :

Տր . Թոմարն Բըդրի կը ցուցնէ իր անգուգական սէրը որ ու-
 նէր իր մօրը նկատմամբ : Ամենաղրազ տարիներուն սովոր էր 50
 մղանէ աւելի հեռու տեղ մը իր մօրը տեսութեան երթալ : Իր
 վերջին խօսքերն էին . « Ինչ տարօրինակ բան մըն է խորհիլ թէ
 քսանըջորս Ժամուան մէջ կրնամ մայրս տեսնել » :

Հէրէկ

ԿէՏԻԿՑԻ Կ.



Կ Ի Ր Ա Կ Ի Ի Մ Տ Ա Ծ Ո Ի Մ Ն Ե Ր

Ա.Ի.Ա.Գ. ՇԱ.Բ.Ա.Թ.

« ՎԱՂԱՄԵՌԻԿ ՔՐՈԶՍ »

Տօներու է՛ն հրաշալին ու է՛ն նուիրականն է այս « Աւագ Շա-
 բաթ » ը, երբ Քրիստոնեայ եկեղեցին կը յիշատակէ իր Փրկչին
 անճառելի մոլտքը Երուսաղէմէն ներս , և հոգեզմայլ օրինակը
 բաղարջակերաց , անբացասելի խոնարհութիւնը աշակերտացը
 առջեւ , կսկծեցնող չարչարանքը խաչին վրայ , տխրալիլ թաղումը
 ցուրտ գերեզմանին մէջ եւ հզօր ու հիացիկ Յարութիւնն գերեզ-
 մանէն անդին :

Ծ Ա Ղ Կ Ա Զ Ա Ր Պ

Դարերէ ի վեր տօնուած ու յաւիտենապէս յիշատակուելիք
 սրբանուէր արարողութեանց շրջանն է որ ծայր կ'առնէ « Մաղ-
 կազարդ » ի կիրակիէն , երբ ընդհանուր քրիստոնեայ սրտեր կը
 տարուին ահա՛ թաղուիլ հոգեկան զգայնոտ պատրանքի մը մէջ .
 հիացիկ , յիշատակելու համար Տիրոջը անըմբռնելի դերը , իր քա-
 ռոզչութեան ու հրաշքներու շրջանէն ետք մինչեւ իր դառն մահը ,
 կեանքին իրիկնամուտը ու անկէ անդին տենդոտ ու կեանքոտ ,
 փալիւրուն վերածնունդով , Ո՛հ , տեսէք հոն , դարձուցէք ձեր գը-
 լուխներն . ի՞նչ ամբոխ է այդ , Իրարանցում մը ու հետաքրքիր
 վազք մը չորս դին . եռ ու վեռ մը այլատարազ ամբոխի մը , ո-

րոնցմէ շատեր ի մի ձայն կը ձայնակցին պողոտութեան, որոնք կը բղխին, կ'ընդլայնին, օդի անսահման ընդարձակութեանը մէջ առ կախ: Ովսանաներու երկար ու երկար հիւսկէնն է որ կ'երթայ պսակ մը կազմել, իր վեհութեանը մէջ այդ պաշտելի Տիրոջը լուսաշող գլխոյն:

Թափո՛ր պատկաւելի ու վեհաշուք, զոր փայլ կ'առնէ դէպի մեծ տաճարը. խուռներամ հետեւողներու կրկին շարքին մէջ. որոնց ձեռքը ձիթենոյ շիւղեր, արեւէն մաշուող ոսկի փոշիին թակ կը խայտան, կը թրթռան կարծես. հազարաւոր մանուկներու եւ ամէն հասակէ մարդոց սրտին ու զգացումներուն վերասլացումին պէս զգայուն: Հիւսնալի է տեսարանը այդ յոգնած ու ցաւատանջ դէմքին. զոր ամէնքը կը գովարանեն:

ԱՌԱՔ ՀԻՆԳԵԱԲԹԻ

Սա՛ հոգիին հետ խօսող օրուան մէջ, իրաւամբ մարդուն վառ երեւակայութիւնը կը սաւառնի դէպ ի վեր, խանդոտ յափշտութեամբ մը դէպ ի Տէր իր սրտին բոլոր թափովը:

Ընթրեաց արարողութիւնն է որ իր անկեղծ սրբութեանը մէջ կը յիշատակուի այսօր, անվթար պահելով վեհ խոնարհութեան օրինակը, զորս Քրիստոս, իր անվիճելի մարդեղութեան կեանքի շրջանին վերջի տխրալի օրերը, ցոյց տուաւ մարդուն: Որքա՛ն շքեղ է եկեղեցին, համակ փառք, իր ձիւնաթոյր ծածկոյթովը ու սրբագործուած սեղանով: Ո՛հ. տեսէ՛ք մեր Փրկիչն՝ ինքն, աշակերտներէն շրջապատուած կը կատարէ Սուրբ Խորհուրդն, Աստուածութիւնն՝ հոգածին մարդուն անմահ հոգիին հետ կապելով ու մասնակից ընելով զայն իր երկնային փառքին:

Հոգւոյ անմահութիւնը գիտնալ ու չզգածուիլ, իբր քրիստոնեայ ապրիլ ու չքամել անոր երանութիւնը: Ի՞նչ մեծ ու շինիչ բարոյական եւ ի՞նչ ապշեցնող դեր մըն է որ կը ներգործէ ու կը կատարէ տիեզերքի Ստեղծիչն: Իր երկնային անիմանալի փառքէն, իր տարաշխարհիկ անեղութենէն իջնալ դէպի մարդն. ապրիլ անոր հետ, մարդել ու սրբագործել զայն, շինել ու կաղապարել անոր հոգին ու զգացումներն, փրկել զայն կորուստէն ու ապականութենէն եւ բարձրացնել մարդը՝ մինչեւ իր լուսասփիռ աթոռն, հաւասարեցնելով անոր էութիւնը իր անեղր ու անսահման հոգիի լայն սեւեռումին: Ի՞նչ սքանչելի խոնարհութիւն ու ի՞նչ խնկելի օրինակ: Վազե՛նք ուրեմն եկեղեցի, դիմենք այդ սրբավայրը, մտածենք մեր երեւակայութեանը ուժգին թափովը ու պիտի մխիթարուին մեր հոգիները: Բարեբանելի է այս տօնն:

Քատը գիւղ

ԷՌՕՄԱՆ Տ. Խ.

ԱՆԴՈՒՆԴԻՆ ՍԷՋ

(Շարունակութիւն 12րդ Թիւէն)

Նաւուն կամուրջին վրայ խօսակցութիւնները սկսան նորէն:

— Շատ տաք զգալու չէ վարը, ըսաւ Ուէյպրիճ, Կ'ըսեն թէ որոշեալ խորութենէ մը վար՝ ծովուն ջուրը սառուցեալ աստիճանի մը մէջ կը գտնուի:

— Ուրկի՞ց արդեօք դուքս պիտի ելլէ, հարցուց Սթիվէնս:

— Հո'նկէ, պատասխանեց հրամանատարը մատով հարաւարեւելեան կողմը ցոյց տալով: Եւ չեմ յուսար որ շատ ուշ մնայ, արդէն երեսուն եւ հինգ վայրկեան եղաւ ընկղմիլը:

— Որչ՞ափ ժամանակ պէտք է արդեօք Ովկէանոսին յատակը հասնելու համար, ըսաւ Սթիվէնս:

— Հինգ մլոն խորութեան համար, աննման արագութիւնը ամէն մէկ երկվայրկեանի համար երկու ոտնաչափ հաշուելով, թէ երթի եւ թէ դարձի պահուն, երեք քառորդ վայրկեանի չափ ժամանակ մը պէտք է:

— Այն ատեն ուշ մնաց, ըսաւ Ուէյպրիճ:

— Բայց... գրեթէ, պատասխանեց նաւապետը: Կարծեմ թէ չուանին փաթթուելուն համար ալ քանի մը վայրկեան պէտք է:

— Ատիկա մոռցեր էի, յարեց Ուէյպրիճ:

Եւ սպասեցին: Դանդաղօրէն վայրկեան մը սահեցաւ, յետոյ երկրորդ մը՝ առանց ո՛ր եւ է գունդ ջուրին երեսը երեւնալու:

Եւր երեսուն եւ հինգ վայրկեան ետքը արեգակը կը հասնէր հորիզոնին գագաթնակէտը, շողեւնաւին մէջ ամէն մարդ կ'սպասէր գունդին երեւնալուն, եւ սակայն ոչ ոք կը համարձակէր ընկերոջը յայտնել թէ ամէն յոյս կորսուած է: Առաջին անգամ Ուէյպրիճ խօսեցաւ:

— Ասանկ փորձերու վրայ, արդէն բնաւ վստահութիւն ունեցած չեմ:

— Ի՞նչ, գոչեց Սթիվէնս, չէ՞ք կարծեր որ...:

— Հաւատացէ՛ք որ, ըսաւ Ուէյպրիճ...:

— Ասանկ հաշիւներու վրայ բնաւ հաւատք ունեցած չեմ, յարեց հրամանատարը, անանկ որ յոյս չեմ կտրեր:

Կէս գիշերին՝ շողեւնաւը դանդաղ շարժուով մը՝ գունդին ինկած տեղին բոլորտիքը կը պտտկէր, ելեքտրական զօրաւոր լապտերին օգնութեամբ ծովուն ամէն մէկ կէտը խռզարկելով:

— Եթէ պատու հանը չէ խորտակուած, կ'ըսէր Ուէյպրիճ, իր կացութիւնը սոսկալի է, որովհետեւ գապանակի շարժումը կանգ առած ըլլալու է, եւ ինք, մենէ հինգ մղոն վար, մութին ու ցուրտին մէջ, բանտուած կը մնայ սլզտիկ գաւնդին մէջ, անանկ տեղ մը ուր ո՛չ արեւին ճառագայթը կրնայ թափանցել եւ ոչ ալ մարդկային կենդանի էակ մը իջած է ջուրերու ստեղծուելէն ի

վեր: Առանց անունդի, ցուրտէն ու անօթութենէ, տանջուած, վախէ սարսուռն, ինքզինքին հարցնելով թէ անօթութենէ՞ կամ շնչահեղձութենէ պիտի մեռնի: Թշուառական, ինչ պզտիկ բաներ ենք, ի՞նչ պզտիկ սատանաներ: Անդունդին մէջ, մղոններով ջուր մեր ոտքին տակը և մենէ վեր, մերին շուրջը՝ երկինք. ի՞նչ վիհ:

Գրեթէ նոյն վայրկեանին լոյսի շողշողում մը բարձրացաւ երկինքի մէջ, ընթացքը կամացցուց, կանգ առաւ, պզտիկ անշարժ կէտ մը եղաւ: Յետոյ սկսաւ թաւալիլ և երկնքի աստղերու լոյսին մէջ կորսուեցաւ:

Այս տեսնելուն՝ բերանը բաց, թեւերը տարածուն, ապշութեան վայրկեան մը ունեցաւ: Յետոյ ինքզինքին դալով դէպի ելեքտրական լապտերը վազեց «էլթէ՛տ, օհէ՛» պօռալով:

— Աչքովս տեսայ, կը կրկնէր, լապտերները վառած են: Հիմայ դուրս ելաւ: Ձախ կողմէն փնտռեցէք...

Բայց արշալոյսին միայն գտան գունտը: Անմիջապէս ճախարակներէն չլթանելով վեր քաշեցին և պատուհաններուն պտուտակները քակելով գունտին ներսը դիտեցին:

Ներսի օդը շատ սաքցած էր և պատուհաններուն եզերքները ծածկող կիթաբերքան կակուղցեր էր: Էլթէ՛տ՝ ուշաթափ, նըստարանին վրայ կքած մնացել էր: Բժիշկը ներս մտաւ և գրկելով զայն նաւազներուն անցուց. բաւական ժամանակ տարակոյսի մէջ մնացին թէ էլթէ՛տ մեռա՞ծ կամ ողջ է: Չգուշութեամբ սենեակ տարին ու անկողինին վրայ դրին:

Մեռած չէր ան, բայց կատարեալ ջլատութեան մը ենթարկուած: Շատ օրեր անկողինը մնաց առանց չարժում մը ընելու: Հազիւ թէ արաթ մը ետքը կարող եղաւ գլխուն եկածները պատմելու:

Առաջին խօսքին յայտարարեց որ նորէն պիտի սկսի: Գունտը կատարեալագործուելու պէտք ունէր, ըսաւ, ու գուռած ժամանակ չուանը կտրելու համար: Եւ այսքանը սկսի բաւեր իրեն:

— Դուք այնպէս կը կարծէք թէ, յարեց, տիղմէ զատ ուրիշ բան չպիտի գտնեմ. զիս կը ծաղրէիք, բայց ես ամբողջ նոր աշխարհ մը գտայ:

Եւ բրաւ իր պատմութիւնը հատակտոր կերպիւ, ամէն անգամուհի միշտ վերջէն սկսելով, այնպէս որ անկարելի է հիմա իր խօսած կերպովը կրկնել: մենք կարգի դրինք զանոնք, և ինչ որ պիտի կարդաք բուն իսկ էլսդէտի ըրած պատմութիւնն է՝ որ կարգի դրուած է:

«Իր ճամբորդութիւնը շատ տաժանելի կերպով սկսաւ: Մինչև որ չուանը ամբողջովին քակուեցաւ, գունտը չդադրեցաւ տատանելէ: Գորտի մը զգայնութիւնը ունեցաւ զոր գունտի մը մէջ փակելով վրայէն աքացի հարուածներ կը դարնեն: Մինակ մեծ ճախարակն ու գլխուն վերեւ երկինքը կը տեսնէր: Յանկարծ տատանումը դադրեցաւ, պողպատէ գունտը հաւասարակշռութիւնը գտաւ և երբ էլթէ՛տ ոտքի ելլելով դուրսը դիտեց, չորս կողմը ֆուրերուն գորշ-կապոյտ գոյնը միայն կը տեսնուէր՝ արեւ-

ւուն մարած ճառագայթներուն տույն լոյսին տակ: Հազարաւոր պզտիկ սեւ առարկաներ կը փախչէին պատուհանին առջեւէն: Յետոյ, քանի կը նայէր մթութիւնը երթալով կ'աւելնար, մինչեւ որ իր գլխուն վերեւ ջուրերը՝ կէս գիշերուան մութ երկինքին պէս երեւցան, իսկ իրմէ վար՝ մթութիւնը ամենակատարեալ էր:

« Հապա՛ գունտին անկումին յառաջ բերած զգացողութիւնը: Կը բաւէ պահ մը խորհիլ՝ իր երեւակայութեանը առջեւ պատկերացնելու համար զայն: Այն ատեն եւ միայն նոյն պահուն էլսութէտ զղջաց այդ փորձին ձեռնարկելուն: Յաջողութեան պայմանները բոլորովին տարբեր տեսակէտէ մը կը դիտէր հիմայ: Մտածեց այն ահագին սղոցածուկերուն վրայ՝ որոնք ծովերու այդ խորութեան մէջ կը վխտան. և որոնց ստամոքսին մէջ երբեմն կէս մը չմարտած կը գտնուին պալէնայի ձագերու ամբողջ դիակներ: Իրեն այնպէս կուգար թէ անանկ գազան մը կլլելու վրայ է գինքր պաշտպանող դիւրարեկ գունտը: Արդեօք զսպանակի շարժումը՝ ջուրին մէջ ալ կանոնաւորապէս պիտի գործէ՞ր: Բայց ալ գործը գործէն անցեր էր. վար իջնալ ուզէր կամ ետ դառնալ. բան մը կախում չունէր իր կամքէն:

« Յիսուն երկվայրկեա՛ ետքը, դուրսի մթութիւնը կատարեալ էր, միայն ելեքտրական լապտերը տարտամ լոյս մը կը սփռէր պատուհանին բոլորտիքը ջուրերուն վրայ: Այդ պահուն զգացող գունտը երթալով կը տաքնար ջուրին հետ շփումէն. քրտնիլ սկսած էր. ձեռքը պատուհաններուն տարաւ՝ ապակին կրակ կըտրեր էր. ժամացոյցը երկու վայրկեանի ճամբորդութիւն մը կը ցույնէր: Էլսթէտ գիտէր որ ծովու այդ խորութիւններուն մէջ ջուրին բարեխառնութիւնը սառոյցի աստիճանին կը մօտենայ, եւ կը վախնար որ տաքութեան ու ցրտութեան այս ծայրայեղ աստիճաններու միջեւ գունտը չպայթի: Բայց իր վախը չիրականացաւ. պողպատեայ պահարանը սկսաւ օրօրուիլ, տաքութիւնը նուազիլ. Ովկէանոսին յատակը հասեր էր:

« Երբ էլսթէտ վառեց ելեքտրական լապտերը և սկսաւ դուրս դիտել, Հսկայ սպունգներ ահագին կոյտեր կը ձեւացնէին: Ծիրանեգոյն ու կարմիր գոյներով թփածու բոյսեր գրեթէ ամբողջ գետինը կը ծածկէին: Խեցգետնի նմանող կենդանիներ, խոշոր կամ կոյր աչքերով՝ կ'անցնէին լոյսին շառաւիղին մէջէն եւ խաւարին մէջ կ'անհետանային՝ գետնի կաւը կը պզտորէին իրենց հետքը ձգելով:

« Նայիս հազարաւոր ձուկերու երամ մը անցաւ գունտին վերայէն եւ երբ անհետացաւ, էլսթէտ նշմարեց շատ աւելի մեծ կենդանի մը որ դէպի գունտը կը յառաջանար: Առաջ չկրցաւ որոշ գաղափար մը կազմել այդ տարօրինակ արարածին վրայ որ քալող մարդու մը երեւոյթը կ'ընծայէր: Երբ ելեքտրական լոյսը վրան ինկաւ՝ զարմանալի կենդանին աչքերը գոցեց շուրջաւ:

« Նմանը չտեսնուած ողնաւոր կենդանի մըն էր: Ծիրանեգոյն գլուխը՝ քամէլէոնինին կը նմանէր, սակայն ճակատը խիստ շատ լայն էր. դէմքին ուղղաձիգ դիրքը զարմանալի նմանութիւն մը կուտար մարդկային դիմաքծին: Երկու դուրս ցցուած

աչքեր եւ խոշոր բերան մը՝ մեծ սողուններու նկարագիրը մը կը յատկանշէին։ Ահագին ականջներէն դուրս ելած կարմիր թելիկներ կային՝ որոնք շանաձուկերու յատուկ են։

«Բայց այս կենդանիին առթած հետաքրքրութիւնը՝ մինակ մարդկային դէմք մը ունենալը չէր։ Կատարեալ երկոտանի մըն էր ան։ Իր քիչ մը գնտաձեւ մարմինը հաւատարակչիւ կեցած էր տեսակ մը եռոտանիի վրայ զոր կը կազմէին պոչ մը եւ գորտի



թաթերու պէս երկու յայն ոտքեր։ Վերին անդամները որոնք խիստ զուարճալի նմանութիւն մը ունէին մարդկային բազուկներուն հետ՝ վերջաւորուած էին ոսկորէ երկայն տէգաձեւ գործարանով մը։ Այս կենդանիին մարմինը քանի մը գոյն ունէր։ Գրյուխը, ոտքերն ու ձեւքերը ծիրանեգոյն էին, իսկ մորթը՝ որ հագուստներու պէս մարմնին վրայէն կտոր կտոր կախուած էր՝ մութ փոսփորափայլ գոյն մը ունէր։

(Մնացեալն յաջորդ թիւով)

Թարգմ. Զ. Ն. ՊէրՊէրեան

ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

ԱՐԻՉՈՆԱԻ ԲՆԱԿԱՆ ՍԱՌՆԱՀԱՆՔԵՐԸ

Ակներեւ ճշմարտութիւն մըն է, անշուշտ, թէ գիտութիւնը որքան զարգանայ և բարգաւաճի, մարդկային հանճարը որքան յառաջանայ դէպի գործնական կատարելութիւն, այնքան մեծ եւ հզօր հրաշալիքներ պիտի ճանչնայ մարդկութիւնը — հրաշալիքներ՝ զորս ինք երազած անգամ չեր եւ որոնց գոյութիւնը, գուցէ անհաւատալի թուի իրեն։ Անուրանալի է նաեւ թէ բնութիւնն իր յատուկ դերը ունի այն մեծ գործին մէջ, եւ անոր կազմակերպած հրաշալիքները ոչ նուազ հիանալի են քան անոնք՝ զորս մարդկային հանճարը ստեղծած է։

Նախապատմական օրերուն մէջ բնութիւնը յայտ յանդիման կը ցուցադրէր իր մէջ գործուած բնական եւ զեղատեսիլ հրաշալիքները, բայց ժամանակ անցնելով, երկրի կազմութեան զանազանութիւնը, անոր մակերեւոյթին եւ շատ անգամ ու ներքին, այլափոխութիւնները ծածկեցին զանոնք մարդու աչքերէն։ Եւ սակայն անխոնջ և յարասեւ հետազօտութիւններ ի յայտ բերած են անոնցմէ շատերը որոնք «Աշխարհի հրաշալիքները» անուան տակ մեր հիացումը կը խլեն։

Ասոնցմէ մին կարելի է համարել Արիզոնա նահանգին մէջ գտնուած Գլաբի սառնահանքերը՝ որոնց բնական զիրքը՝ զարմանքը գրաւած է շատ մը այցելու երկրախոյզներուն։

Արիզոնա շատ հրաշալիքներ կը պարունակէ, բայց իր սառնահանքի քարանձաւները ամէնէն եզակիս զիրքը կը գրաւեն ցարդ տեսնուածներուն մէջ։ Լափաի խաւին կեդրոնն է Արիզոնայ երկրաբաններ կ'ըսեն թէ նախնական օրերուն երբ երկրի այլ և այլ մասերը կը կազմուէին, այս վայրը ջերմ հրաբխային պոռթկումներու և ցնցումներու նիստը եղած է, և թէ ժայռերուն արդի զարմանալի կազմութիւնը կրակի և շարժման արդիւնք կը կարծուին։

Իրաւի է որ հազարաւոր դարեր առաջ, երբ դեռ մարդ ըստեղծուած չէր, կրակի եւ երկրի ցնցումին միջոցաւ, ինչպէս ուրիշ տեղեր՝ նոյնպէս հոս այրեր, կիրճեր եւ ահագին խորութիւններ բացուած են։ Բայց հիմայ, կ'ըսեն թէ, ընդարձակ սառույցի զանգուածներ գոյացած են այս մութ խորշերուն մէջ։ Տեղ մը՝ ուր երբեմն հուր ու բոց կ'եռար, հիմայ պաղ սառույց կը գտնուի եւ որուն պատճառը ցարդ չէ հասկցուած լիովին։

Բրոֆէսէօր մը կ'ըսէ թէ քարայրը հրաբխային բորբոքումէ մը կազմուած է, ուր, պաղելէ վերջ, սառոյցի ահագին կտորներ լեցուած են որոնք ժամանակ մը Հիւս. Ամերիկան կը պատէին, որովհետեւ, կ'աւելցնէ ան, արդի քարայրին մէջ տեսնուած սառոյցը՝ սառնային շրջանէն մնացած կը կարծուի: Ուրիշ Բրոֆէսէօր մը կը հաստատէ թէ քարայրին մէջ քերմութեան աստիճանը խիստ ցած է, այնչափ պաղ որ Արիզոնայի դաշտէն եկած տաք



օդի հոսանք մը ներս մտնելով խկոյն կը խտանայ և սառոյցի կը վերածուի:

Այս քարայրերուն ամէնէն ծանօթը Գլարքի ձորին գագաթնակողմը կը գտնուի որմէ 17 մղոն դէպի հիւսիս, Գոլորատոյի ընդարձակ գետնախորշին մօտ կ'իյնայ Ֆլակսթաֆ՝ Արիզոնայի վաճառաչահ մէկ քաղաքը:

Այլը՝ որուն մէջ մտնել դժուար է եղեր սապէս, կը նկարագրեն:

« Բերնին կողմը լպիրծ ու փոքր ապառաժի բացուածք մը կայ. այնպէս որ, ներս մտնել ուզող մը ծունգի վրայ սողալու է: Ինչ մը տեղ սողոսկելէ վերջ — իբր 50 ոտք — տղ շատ կը պաղի ու ներս տարուած լամբարի կամ մամի լոյսով կարելի կ'ըլլայ պարզապէս տեսնել սառույցներու շեղջերը: Հոս պատերը զարդարուած են սառույցի կտորներով եւ պաղլորակներով որոնց ետեւ կը գտնուին կապտագոյն սառնակոյաներ: Աս վերջիններուն ո'րչափ թանձր ըլլալը դեռ ոչ ոք կարող եղած է հասկնալ. բայց կը կարծուի թէ 50—100 ոտք է սառույցէն մինչեւ ժայռը. Նրբանցքին մէջ՝ որ երթալով կը նեղնայ, այս վիճակով 50 ոտք յառաջանալէ վերջ, ճամբուն նեղ մասը կը լրանայ եւ ալ ընդարձակ ու տխրատեսիլ քարայրն է որ աչքիդ առջեւ կը պարզուի: Հոս կարելի է ուղիղ կայնիլ եւ դիտել աշխարհի ամենագեղեցիկ տեսարաններէն մին, ինչպէս պատկերին մէջ կը տեսնուի: Կրճասենեակը հարկըր ոտք տրամադծով բացուածք մըն է՝ սառույցներով եւ պաղլորակներով լի, որոնք աղամանդի պէս կը չողան բեկբեկուն ճառագայթներուն տակ: Յուրտը հոս սասնիկ է եւ սառը անհաւատալիօրէն թանձր: Կրճասենեակէն շատ մը այրեր ու նրբուղիներ կ'երկարին դէպի ներս, որոնք նաեւ լի են սառույցներով »:

Ա. Թ. Սէվըրնս՝ որ այս նրբուղիներուն շատերուն մէջ մտած է, սապէս կը նկարագրէ, « Վտանգաւոր եւ գրեթէ անկարելի ձեռնարկ մըն է փորձել թէ ո'րչափ հեռու կ'երկարի այս փառաւոր տեսարանը: Ես շատ զգուշութիւն կ'ընէի շատ առաջ երթալու մասին, որպէս զի ետ դառնալու ճամբաս չկորսուէր: Ուրիշ վտանգ մըն ալ սա էր թէ շատ մը մուծ եւ անտեսանելի մեծ ու պզտիկ ծակեր բացուած կային առջիս, որոնց մէջ ինկողին մահը անխուսաբելի է. ես ասոնց ալ ուշադրութիւն կ'ընէի որ չըլլայ թէ ինչայի ու պաղ սառնարանը ըլլար գերեզմանս »:

Կ'ըսեն թէ երբ մէկը խօսի այս քարայրին մէջ, ձայնը զանգակի մը պէս կը հնչէ որուն սրճադանքն ալ զանգակի սուր ձայնին կը նմանի: Մը. Սէվըրնս բերնի սուլիչ մը հնչեցուցած է հոս եւ կը պատմէ թէ ձայնը այնչափ համբարաշխ անուշութիւն մը ունեցած է որ բաժնուիլ չէ ուզած այդ տեղերէն, բայց տիրող սաստիկ ցուրտը զինք ստիպած է որ մեկնի: Մը. Սէվըրնս աշխարհի հրաշալիքներէն մին կը համարի այս քարայրը որ մարդու ծանօթ ո եւ է քարայրէ մը մեծ ըլլալը ստուգուած է:

Ի Տ Ե Ա Ն Ս

Սիրեմ կարգալ ես լրագիր,
Ըղալ քերթի մը խընթագիր,
Սասար շինել լրագրաց,
Սեր ներշնչել ընթերցողաց:

Սիրեմ զրեւ անուշ վեպեր,
Եւ քանկագին պէս պէս նիւթեր,
Անգաղական շոյսին նըման
Յար աշխատիչ աներկեւան:

Սիրեմ ըղալ մեկ մեկ մանկավարժ,
Աշխատեցով մանկանց ի վարժ,
Որ սարածեմ անուն, համբաւ,
Ամենուրեք ուշագրաւ:


Սիրեմ յաղթել սրգիսուքեան,
Պարծաւն շինել միշտ հանրութեան.
Ճըզնիլ, զր/նիլ միշտ անդադար,
Որ շուտ փախչի մեզմէ խաւար:

Սիրեմ քողով ես յիշատակ,
Հոգ չե ըլլամ սեւ հողին տակ:
Այսօր մեռնիլ լաւ կը սեպեմ,
Քան թէ ապրիլ իբրեւ նըսեմ:

Տիարաբեր

ՄԻՀՐԱՆ Թ. ՊԱՍԹԱՃԵԱՆ

Մ Տ Ա Մ Ա Ր Զ Ա Յ Ի Ն Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ն Ե Ր



Ա Գ Ա Հ Ե Ր Կ Ր Ա Զ Ա Փ Ը

Երկրաչափ մը իրեն տուն մը շինել կուտար, տան չափակա-
գիծներն այնպէս պատրաստած էր որ իւրաքանչիւր սենեակ երկ-

րաչափական կանոնաւոր ձեւ մը սենեայ . մին կըրոր էր, ուրիշ մը տրապիզաձեւ, եւայլն : Ամբողջ շէնքը լմնցած էր, մինակ սենեակ մը կը մնար՝ որու տախտակամածը չէր դրուած . այս սենեակին նիւթ երեք կողմերը հաւասար երկարութիւն ունեցող եռանկիւն մըն էր :

Երկրաչափը ունեցած զարմանալի բնաւորութեան չափ ալ ագահ էր : Գնաց քակուած շէնքէ մը 10 կտոր տախտակներ գնեց . որոնք (Տես պատկերին ձեւերն) իր ատաղձագործին բերելով ըսաւ . « Այս տասըզանազան ձեւ տախտակներով մնացած սենեակին տախտակամածը գոցէ : Բայց անանկ ըրէ որ տախտակներուն կէսը աւելնայ :

Ատաղձագործը բաւական ատեն աշխատելէ ետքը՝ տեսաւ որ եթէ այդ կտորներուն իւրաքանչիւրը մէջտեղէն կէս ընէ , մէկ կէսովը կրնայ գործը լմնցնել , իսկ մնացեալ տասը կտոր կէսերը կ'աւելնան :

Մեր ընթերցողներէն չկա՞յ արդեօք մէկն որ այս ատաղձագործին չափ ճարպիկ ըլլայ եւ ինքն ալ այս տասը կտոր տախտակներուն կէսովը եռանկիւնաձեւ սենեակի մը տախտակամածը գոցէ :

Զ. — ԳԻՆՈՎԻՆ ԳՐԱԻԼ

Երեք հոգի գինետուն մը մտան . սեղանին վրայ դրուած էր 21 չիշ գինի, 7ը լեցուն, 7ը կէս լեցուն և 7ը պարապ :

— Այդ 21 չիշերը մեզի բեր, ըսաւ , նորեկներէն մին՝ գինեպանին եւ մէջերնիս բաժնէ անանկ որ մենէ Իւրաքանչիւրը նոյնքան գինի եւ եօթը շիշ ունենայ իւր առջեւը :

Գինեպանը չի յաջողեցաւ եւ շատ մը աշխատելէ ետքը խօսակցին դառնալով առաջարկեց որ ինքը բաժնէ և խոստացաւ բնաւ դրամ չառնել այդ 21 չիշերուն համար եթէ յաջողի : Իրաւ ալ գինովը յաջողեցաւ եւ գինեպանը իր գինին վրայ տուաւ :

Ի՞նչպէս կատարուած էր այդ բաժանումը :

ԿԱՐԵԻՈՐ ԶԵԿՈՅՑ

Մեր Մեծ. Գործակալներէ եւ Բաժանորդներէ կը խնդրենք որ եթէ ներկայ տարւոյ առաջին թիւէն աւելորդ ունին՝ բարեհաճին մեզ վերադարձնել :

Այն բաժանորդներն , որոնք ուղղակի զատ նամակով Հանրագիտակ ուղած են և մինչեւ ցարդ չեն վճարած բաժնեգինը , բարեհաճին վճարել կա՞մ նամակադրոյմով եւ կամ Մանտա բօսթով , հակառակ պարագային՝ թերթին առաքումը պիտի դադրի :



Սոյն պատկերը ընդօրինակեցէք՝ եթէ չէք ուզեր ձեր Հան-
րագիտակը կտրել, եւ յետոյ ծալլելով գտէք թէ՛ այս մարդուն
ձեռքի տոպրակին մէջ ի՞նչ կայ:

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Կը ծանուցանենք մեր Մեծ Բաժանորդներուն եւ Բարեկամ-
ներուն որ՝ սիրով եւ առանց փոխարինութեան կը կատարենք ի-
րենց որ եւ իցէ յանձնարարութիւնն՝ եթէ փոխարժէքը միասին
ղրկեն, իսկ հակառակ պարագային՝ անգործադրելի կը մնան:

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԸ

Գիսակի « Մտածութիւնք Տօնական Օրերու Հայ. Սբ. եկեղեցւոյ » խիստ շահեկան ու օգտաշատ գրքոյկը, որ արժանի է ընթերցման մասնաւորաբար Մեծ Պահքի օրերուն, կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով: Կեդրոնատեղին է Մէրճան, Եալտըզ խան, թիւ 10, Առաքել էֆ. Գաբրիէլեանի գրասենեակը: Գին 5 դահեկան: Մէկ անգամէն 5 օրինակ գնողին մէկ հատ նըուէր կը տրուի: Հասոյթը կը վերաբերի ողբացեալ հեղինակին այրի տէկնոջ և իր որբերուն: Ո՞վ չպիտի սիրէ հատ մը գնել:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Հիւսէյնիկէն՝ Կ. Մ. էֆ. Յովսէփ, երկու օրինակ Հանքագիտակ կը նուիրէ՝ մին Մեծ. Տիգրան Պէրպէրեանի՝ ի Տիգրանահերտ, եւ միւսն ալ Մեծ. Տիգրան Յովսէփեանի՝ ի Հիւսէյնիկ:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Արդնի-Մաշէն. Յ. Ա. Ս. էֆ. — Հանրագիտակի 1—6 թիւերը մէկ ծրար կապուած շրկուած է ձեզ տեղւոյդ թղթատունէն փնտռեցէք: — Մէն մի հատորի գինն է 13 ղրշ:

Տրապիզոն-Ռեսք, Յ. Ս. էֆ. Մ. — 1—11 թիւերը ամբողջովին շրկուած է մէկ ծրարով, թղթատունը փնտռեցէք:

Խարբեղ, Մ. էֆ. Ս. Ո. — Ձեր յիշեալ թուականով շրկած նամակնիդ մեր ձեռքը չէ հասած: Պակաս թիւը շրկուեցաւ: Ձեր խնդրածները գտնել մեզի համար անկարելի է: Ստացանք յօդուածին շարունակութիւնը:

Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. — Նոր բաժանորդին 1—13 ձեր ծրարով շրկուեցաւ: — Երկու նամակնիդ ստացած ենք:

Երզնկա, Պ. էֆ. Ա. — 94 եւ 95 տարիներէն սպառած են:

Օրսու, Յ. էֆ. Հ. — Նոր բաժանորդին 1—13 թիւերը շրկուեցաւ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան եւ ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին:

ԽՄԱԳՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՏՊԱԿՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ

Պապը Ալի Տատտէսի, Թիւ 38, Իգտամ լրագրին դէմ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱԲԱԹԱԿԱՆ

Ն Ի

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակի կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ,

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆԵ

Պոլսոյ Համար

30 շաբաթ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 վարայ

Առաջնորդ վանառականացի 12 տեղի վրայ առնել ուղողը պէտք է վճարէ 12 ղրու:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼԻ

Ամասիա, Հայկազուն էֆ. Պանդոմուր

Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպաղեան

Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան

Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրքէրեան

Երզնկա, Պարոյր էֆ. Գ. Թաշճեան

Զմիւռնիա, Պարոյր էֆ. Արզուման

Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան

Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան

Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան

Թեփրիս, Ասատուր էֆ. Արաքէնեան

Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան

Կեսաբիա, Երուանդ էֆ. Երկաթեան

Կիւրքի, Գրիգոր Մ. էֆ. Պանդոմուր

Հալեպ, Ս. էֆ. Ամատեան

Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան

Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան

Մարաշ, Արծ. Տ. Նէրսէս Բ. Շահինեան

Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան

Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան

Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան

Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան

Սրվազ, Մանուկ էֆ. Պէլլէրեան

Սիւնհանի ֆոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան

Վեզիր ֆոքրի » » »

Տիւրքիս, Լեւոն էֆ. Սրապեան

Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Քանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգիրն և կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. Նամակադրուի՝ դնել Նամակին մէջ եւ Նամակն ալ ապահովագրել (թահիլ քան)։ Նամակադրուի կրող Նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը չհասած ժամանակ, երբեք պատասխանատու չենք: